

***Ոչ պաշտոնական թարգմանություն  
Պաշտոնական է համարվում միայն անգլերեն տարբերակը***



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՄԻՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Բրյուսել, 25/05/2011  
SEC(2011) 639

**ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ**

**Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը  
2010թ.**

**Հայաստանի ազգային զեկույցը  
{COM(2011) 303}**

## ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը

2010 թվականին

### Հայաստանի ազգային զեկույցը

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանը և Եվրամիությունը (ԵՄ) առաջին պայմանագրային հարաբերությունները հաստատեցին 1996 թվականին Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում, որն ուժի մեջ է մտել 1999 թվականին: Նշված փաստաթղթի հիման վրա 2006 թվականի նոյեմբերին հաստատվել է ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրը հինգ տարի ժամկետով:

2010 թվականին տեղի ունեցան ԵՄ-Հայաստան հանդիպումներ՝ համագործակցության խորհրդի, համագործակցության հանձնաժողովի, առևտրի, տնտեսական ու իրավական հարցերով ենթահանձնաժողովի և նորաստեղծ արդարադատության, ազատության ու անվտանգության և տրանսպորտի, շրջակա միջավայրի ու էներգետիկայի և միջուկային անվտանգության ենթահանձնաժողովների մակարդակով: 2010 թվականի դեկտեմբերին տեղի ունեցավ մարդու իրավունքների շուրջ ԵՄ-Հայաստան երկխոսության երկրորդ հանդիպումը: Ֆինասական ճգնաժամի ազդեցությունը պետության վրա մեղմացնելու նպատակով, 2010թ. նոյեմբերին ԵՄ և Հայաստանը համաձայնություն կնքեցին 100 միլիոն եվրո ֆինանսական օժանդակության փաթեթի վերաբերյալ:

Արևելյան գործընկերության շրջանակներում 2010 թվականի հուլիսին մեկնարկեցին Եվրամիության և Հայաստանի միջև ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները: Բանակցությունները առաջ են ընթացել լավ տեմպերով: Կողմերի համար համաձայնագիրը Արևելյան գործընկերության հետ ասոցացման, ներառյալ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու ստեղծման և Եվրամիության օրենսդրությանը համապատասխանեցման համափարփակ ծրագրի առումով իրենից ներկայացնում է առաջընթացային և հավակնոտ մոտեցում: Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր հետ կապված բանակցությունները կմեկնարկեն նույն շրջանակներում՝ համապատասխան պայմանների բավարարում դեպքում:

Սույն փաստաթղթում ներկայացված է 2010 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանում Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ զեկույցը: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում են այս ժամանակաշրջանից դուրս արձանագրված զարգացումների վերաբերյալ տեղեկատվություն: Ձեկույցը Հայաստանի քաղաքական և տնտեսական

իրավիճակի ընդհանուր նկարագիր չէ: Արևելյան գործընկերության համատեքստում, տարածաշրջանային և բազմակողմ ոլորտային գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ոլորտային զեկույցներում:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում որոշ առաջընթաց է արձանագրվել քաղաքական երկխոսության և բարեփոխումների ոլորտում: Դրական քայլեր են ձեռնարկվել հաղթահարելու քաղաքական ճգնաժամը՝ աստիճանաբար ազատ արձակելով մի շարք անձանց, որոնք կալանավորվել են 2008թ. մարտի դեպքերից հետո: Լավ առաջընթաց է արձանագրվել գրպարտության ապաքրեականացման ոլորտում: Որոշ առաջընթաց է գրանցվել դատական համակարգի թափանցիկությունն ավելացնելու ուղղությամբ, սակայն ոչ մի առաջընթաց չկա դատական համակարգի անկախության առումով: Լրատվամիջոցների բազմակարծության հետ կապված արձանագրվել է սահմանափակ առաջընթաց: Որոշ առաջընթաց է արձանագրվել խոսքի ազատության ոլորտում: Հայաստանում լավ առաջընթաց է արձանագրվել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիային կից կամրնտի արձանագրության շրջանակներում կանխարգելման ազգային մեխանիզմի բարելավման առումով, ինչպես նաև՝ փաստաթղթերի պաշտպանվածության ուժեղացման առումով՝ կենսաչափական անձնագրերի նախապատրաստման և ներդրման հարցում:

Հայաստանում արձանագրվել է որոշ առաջընթաց մաքսային և սահմանային հսկողության ոլորտում, սակայն առավել ցանկալի կլիներ արձանագրել ընդհանուր առաջընթաց առևտրին վերաբերվող որոշումներում: Հաշվի առնելով 2009 թվականի և 2010 թվականի առաջին կիսամյակում համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով Հայաստանում առկա ծանր անկումը, Գործողությունների ծրագրում ներառված տնտեսական բարեփոխումների, աղքատության հաղթահարման ու սոցիալական համախմբվածության, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված նպատակների իրագործումը սահմանափակ էր: Մեծամորի ատոմակայանի հետ կապված իրավիճակը մտահոգության լուրջ թեմա է, և ԱԷԿ-ի շահագործումից վաղաժամ հանումը հանդիսանում է երկու կողմերի համար գերակա խնդիրներից մեկը:

Հայաստանը պահպանում է իր շրջահայաց մակրոտնտեսական քաղաքականությունը և իրականացրել է մի շարք կառուցվածքային միջոցառումներ՝ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը մեղմացնելու նպատակով: Հայաստանում արձանագրվել է լավ առաջընթաց միջնակարգ մասնագիտական կրթության և վերապատրաստման ոլորտում:

Հայաստանի կողմից Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների հաստատման և զարգացման մասին արձանագրությունների վավերացման կասեցումից հետո, որևէ զարգացում չի արձանագրվել: Եվրամիությունը շարունակում է աջակցել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը՝ առանց նախապայմանների: Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման շուրջ բանակցությունները շարունակվում են բարձր մակարդակով, որոշ առաջընթաց գրանցելով հատկապես ռազմագերիների

փոխանակման հարցում՝ որպես վստահության քայլ հետագա խթանման գործընթացում: Շփման գծում կրակոցների փոխանակման ու մահվան դեպքերը շարունակվում են արձանագրվել, ինչը լուրջ մտահոգություն է առաջացնում:

ԵՀՔ-ի Գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունները կատարելու համար, Հայաստանը պետք է ավելի շատ ջանքեր գործադրի մարդու իրավունքների պաշտպանության և խոշտանգումների ու վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման, ինչպես նաև կալանավայրերում պայմանների բարելավման ուղղությամբ: Հայաստանը պետք է շարունակի բարեփոխումները ոստիկանականության, անվտանգության ծառայությունների ու դատախազության կառույցներում : Բոլոր ոլորտներում օրենսդրության պատշաճ իրականացումը և արդյունավետ կիրարկումը, կարողությունների զարգացումը, դատական համակարգի անկախությունը կունենան առանցքային նշանակություն՝ Ասոցիացիայի համաձայնագրի հետագա իրականացման համար: Հայաստանը պետք է շարունակի ջանքեր գործադրել ամրապնդելու լրատվամիջոցների բազմակարծությունը և ուժեղացնելու կոռուպցիայի դեմ պայքարը, մասնավորապես իրականացման մակարդակով: Լրացուցիչ ջանքեր պետք է գործադրել Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման առումով:

## 2. ՔՐԱՆՔՐԱՎԱՆ ԵՐԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒԹՄԱՆԵՐ

### *Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն*

Ընտրական օրենսգրքի նոր նախագիծը, որը նախատեսում է օրենսդրության համապատասխանեցում միջազգային պահանջներին, ներկայացվել է հասարակական քննարկմանը, որին մասնակցում են քաղաքական ուժերի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները. օրենսգիրքը նաև ներկայացվել է Վենետիկի հանձնաժողովին: Ընդդիմությունը հայտարարել է ընտրական օրենսգրքի սեփական նախագիծ մշակելու իր մտադրության մասին, որը կներկայացվի Վենետիկի հանձնաժողովի քննարկմանը, ինչը ապացուցում է քաղաքական ուժերի միջև առկա վստահության ցածր մակարդակը: Ստացվել է տեղեկության այն մասին, որ 2010 թվականի հունվարին Երևանի թիվ 10 ընտրատարածքում խորհրդարանական լրացուցիչ ընտրությունների ժամանակ գրանցվել են մի շարք խախտումներ, այդ թվում՝ մամուլի աշխատակիցների գործունեությանը միջամտության դեպքեր:

2010 թվականին քայլեր են ձեռնարկվել նախագահական ընտրությունների հետ կապված քաղաքական ճգնաժամի և դրանց հաջորդած **2008 թվականի մարտի** դեպքերի առնչությամբ: Այդ իրադարձությունների հետ կապված մի շարք ձերբակալված անձանց ազատ են արձակել, սակայն կան անձիք, որոնք դեռևս ձերբակալված են, չնայած այն հանգամանքին, որ ունեն ներման իրավունք: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ 2008 թվականի մարտի իրադարձությունների հետ կապված դատավարության

մոնիտորինգի զեկույցում, որը հրատարակվել 2010 թվականի մարտին, բացահայտված են մի շարք հարցեր, որոնք լուրջ մտահոգություն են առաջացնում: Այդ հարցերի թվում են՝ պաշտպանյալների արդար դատաքննության իրավունքը և ազատության իրավունքը; զեկույցում ներկայացված են մի շարք առաջարկություններ: Իրականացվում են միջոցառումներ զեկույցում նշված առաջարկությունների իրականացման ուղղությամբ, մասնավորապես դատաիրավական բարեփոխումների ոլորտում: Մակայն, 2008 թվականի մարտի իրադարձությունների հետաքննությունը լիարժեք չէր և չի հանգեցրել կոնկրետ արդյունքների: 2008 թվականի մարտի հետընտրական բախումների հետևանքով մահացած անձանց հարազատների կողմից իրավապահ մարմինների դեմ ներկայացված հայցերը մերժվել են:

Որոշ առաջընթաց է արձանագրվել դատաիրավական բարեփոխումների ոլորտում՝ 2009-2011 թվականների Դատաիրավական բարեփոխումների ռազմավարության գործողությունների ծրագրի շրջանակներում: Մասնավորապես արձանագրվել է դատական համակարգի թափանցիկության ավելացում, դատական վիճակագրության էլեկտրոնային տվյալների բարելավում և դատարանի շենքերի վերանորոգում ու արդիականացում: Մակայն, ոչ մի առաջընթաց չի արձանագրվել **դատական համակարգի** անկախության առումով, ինչը դեռևս մտավախություն է առաջացնում: Դատավորները շարունակում են մնալ դատախազների, ինչպես նաև քաղաքականապես և տնտեսապես հզոր գործիչների ազդեցության տակ: Որակյալ փաստաբանների քանակը սահմանափակ է, հատկապես մայրաքաղաքից դուրս: Պետք է ջանքեր գործադրել՝ ապահովելու օրենսդրության պատշաճ կիրարկումը բոլոր ոլորտներում:

Անհավասար առաջընթաց է արձանագրվել **կոռուպցիայի** դեմ պայքարի ոլորտում: Ջանքեր են գործադրվել ավելացնելու թափանցիկությունը պետական ոլորտում. բարձրաստիճան պետական ծառայողների գույքի մասին տեղեկությունները յուրաքանչյուր տարի պարտադիր հրապարակվում են: Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի առաջարկություններին համապատասխան մայիսին փոփոխություններ են կատարվել դատախազության մասին օրենքում: Այդ փոփոխություններին համապատասխան, դատախազի վարույթ նախաձեռնելու իրավունքը վերացվել է և դատախազները զրկվել է անձեռնմխելիությունից: Վերահսկիչ պալատը հրապարակել է տեղեկատվություն պետական հիմնարկներում անցկացված ստուգումների քանակի վերաբերյալ: Աճել են կոռուպցիայի շուրջ հանրային քննարկումները: Մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ հեռացվել են աշխատանքից կոռուպցիայի մեղադրանքով: Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքը լրամշակվել է 2010 թվականի դեկտեմբերին: Սահմանափակ առաջընթաց է արձանագրվել հակակոռուպցիոն օրենսդրության ուժեղացման և հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ: 2010 թվականին Հայաստանում արձանագրվել է կոռուպցիայի մակարդակի աննշան նվազում: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքում փոփոխություններն ընդունվել են հունիսին, նկատի ունենալով անցումը պետական ծառայության միասնական համակարգին:

Տարածաշրջանային քաղաքականության երկխոսության ոլորտում հունվարին տարածքային կառավարման նախարարության և Թայեքսի կողմից տարածաշրջանային և ազգային պաշտոնատար անձանց համար կազմակերպվել է սեմինար: Այս միջոցառման արդյունքում նախարարության մի շարք պաշտոնյաներ հրավիրվել էին Քաղաքների և շրջանների եվրոպական շաբաթ միջոցառմանը, որը հոկտեմբերին անցկացվել էր Բրյուսելում: Նախարարի և Հանձնաժողովի միջև քննարկումների արդյունքում Հայաստանը առաջարկել է 2011 թվականին սկսել տարածաշրջանային քաղաքականության շուրջ երկխոսությունը:

### ***Մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները***

Շարունակվել են Մարդու իրավունքների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները: 2010 թվականի հունվարին ընդունվել է Մարդու իրավունքների գործողությունների ծրագրի հայեցակարգը: Հայեցակարգին համապատասխան, կմշակվի Ազգային գործողությունների ծրագիրը: Հայաստանում մարդու իրավունքների ոլորտում իրավիճակի ուսումնասիրությունն ավարտվել է հուլիսին՝ Հայաստանում գործող հասարակական հատվածի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների հետ խորհրդակցությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի կառույցը կարևոր դեր է խաղում Հայաստանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված իրավիճակի հսկողության գործընթացում: 2010 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ներկայացրել է հատուկ զեկույցներ՝ Հայաստանում խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի ու խոսքի ազատության իրավունքի վերաբերյալ: Գրանցվել է առաջընթաց կանխարգելման ազգային մեխանիզմների բարելավման ոլորտում՝ Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրության շրջանակներում, որը համակարգում է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Հունվարին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը ընդլայնվել է ստեղծելով խորհուրդ, որը ներառում է հասարակական կազմակերպություններ (ՀԿ) ու փորձագիտական խմբեր, որոնց կազմում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների մարդու իրավունքների պաշտպանության գծով փորձագետներ: Դեկտեմբերին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ կապված օրենսդրական դաշտում կատարվել էին լրամշակումներ, որոք ուղղված էին ամրապնդելու կառույցի ֆինանսական անկախությունը: Հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը պետք է իրականացնի Համընդհանուր պարբերական դիտարկման առաջարկությունները:

Ստացվել էր տեղեկատվություն կալանավայրերում, ուստիկանության բաժանմունքներում և գորակոչիկների խոշտանգումների և վատ վերաբերմունքի

դեպքերի մասին: Ընդհանուր առմամբ, այս դեպքերի շուրջ համապատասխան հետաքննություն չի անցկացվել: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի մասին ոչ մի վիճակագրական տվյալներ չկան: 2010 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի մուտքը կալանավայրեր և ոստիկանության բաժանմունքներ կարգավորվել է: Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի Եվրոպական հանձնաժողովի զեկույցը հրապարակվել է 2010 թվականին, բացահայտելով, ի թիվս այլոց, համատարած ֆիզիկական վատ վերաբերմունքի դեպքեր՝ 2008 թվականի մարտի իրադարձությունների հետ կապված ձեռքակալությունների ժամանակ:

2010 թվականին որևէ առաջընթաց չի արձանագրվել բանտային պայմանների բարելավման առումով: Ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով մոտ 1000 բանտարկյալների համար նախատեսված նոր քրեակատարողական հիմնարկում դադարեցվել են շինարարական աշխատանքները: Քրեակատարողական հիմնարկները ընդհանրապես չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Գերբնակեցվածությունը, բուժսպասարկման վատ մակարդակը ու ցածր աշխատավարձը և բանտի վարչակազմում առկա կոռուպցիան մնում են մտահոգության թեմա:

**Խոսքի ազատության** և տեղեկատվության ոլորտում արձանագրվել է աննշան բարելավում, սակայն հետագայում հարկավոր է ջանքեր գործադրել: Մայիսին լավ առաջընթաց է գրանցվել գրապարտության ապաքրեականացման մասին օրենսդրության ոլորտում: Սակայն, լրագրողների նկատմամբ բռնությունների դեպքերը, առանց համապատասխան հետաքննության, և հեռարձակվող լրատվամիջոցների վրա կառավարություն ազդեցությունը (այդ թվում կարգավորող մարմինների անկախության հարցում առկա կասկածները), շարունակում են մնալ մտահոգության թեմա: Լրատվամիջոցների բազմակարծության հետ արձանագրված առաջընթացը սահմանափակ է:

Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքում փոփոխություններն ընդունվել են հունիսին: Փոփոխությունների նպատակն էր ստեղծել իրավական հիմք՝ անալոգային հեռարձակումից թվային հեռարձակման անցնելու համար: Սակայն այս նախաձեռնությունը քննադատվել է Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն Լրատվամիջոցների ազատության ներկայացուցիչի կողմից, քանի որ չի խթանում բազմակարծությունը: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությանն և ԵԽ փորձագետների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ, շարունակում է հեռարձակման օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու աշխատանքը՝ միջազգային չափանիշներին այն համապատասխանացնելու նպատակով: Ընդունված օրենսդրության հիման վրա, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հուլիսին հայտարարեց 18 մրցույթ՝ հեռուստառադիոհեռարձակման լիցենզիա տրամադրելու համար: Մրցույթի արդյունքները հայտարարվել են 2010 թվականի դեկտեմբերին:

Որոշ առաջընթաց է արձանագրվել **հավաքների անցկացման ազատության** ոլորտում: Բարելավվել է իրավիճակը կառավարությունը քննադատող հասարակական կազմակերպությունների կողմից տարածքների վարձակալության հետ կապված: Մակայն եղել են սահմանափակումների նոր դեպքեր Երևանի կենտրոնում հավաքներ անցկացնելու հետ կապված, չնայած իշխանությունների կողմից առաջարկվել են կենտրոնից ոչ հեռու այլընտրանքային վայրեր հավաքներ անցկացնելու համար: Հանրահավաքների ժամանակ ոստիկանության կողմից չարդարացված ուժի կիրառման դեպքերը շարունակվում են արձանագրվել:

Որևէ առաջընթաց չի գրանցվել **կրոնի կամ համոզմունքի ազատության** ոլորտում: Հայ Առաքելական եկեղեցին համարվում է պետական եկեղեցի և ունի առավելություններ մյուս կրոնների նկատմամբ, հատկապես այնպիսի հարցերում ինչպիսիք են՝ պետական բյուջեից ֆինանսավորումը, նորադարձի իրավունքը և կրթական հաստատություններում ուսումնական ծրագրի մշակման ու իրականացման իրավունք: Մի շարք անձիք շարունակում են մնալ բանտում՝ երկու տարի պարտադիր զինվորական ծառայությունից գիտակցաբար հրաժարվելու մեղադրանքով, իսկ այլընտրանքային ծառայությունը շարունակում է մնալ խտրական:

Որևէ առաջընթաց չի գրանցվել **անչափահասների արդարադատության** մասնագիտացված համակարգի ստեղծման ոլորտում, ինչի մասին նշված է 2004-2015թթ երեխայի իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագրում: Չնայած իրավիճակի բարելավմանն ուղղված ջանքերին, երեխաների սոցիալական ծառայություններից, այդ թվում կրթությունից և բուժօգնությունից, զրկվելած լինելու հիմնական պատճառը մնում է աղքատությունը, հատկապես գյուղական վայրերում:

Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի նախագիծը, որը մշակվել է հասարակական կազմակերպությունների հետ խորհրդակցելով, քննարկվում է խորհրդարանում: Արդարադատության նախարարության կազմում ստորաբաժանում ստեղծելու մասին որոշումը, որը իրավունք կունենա վերահսկելու իրավաբանական անձանց գործունեության օրինականությունը և լուծարելու իրավաբանական անձանց իրավական ակտերի խախտման համար, մտահոգություններ է առաջացրել հասարակական կազմակերպությունների շրջանում:

Սեպտեմբերին Հայաստանը ստորագրել է Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից **երեխաների պաշտպանության** ԵԽ կոնվենցիան: **Գենդերային քաղաքականության** հայեցակարգը հաստատվել է փետրվարին: Ընտանեկան բռնության մասին օրենքի մշակման հետ կապված առաջընթաց չի գրանցվել:

Չնայած **սոցիալական և զբաղվածության քաղաքականության** հիմնական իրավական հիմքը ստեղծված է, աշխատանքային օրենսգիրքը և գործազրկության, սոցիալական աջակցության և պետական կենսաթոշակներին վերաբերվող



զբաղվածության ու սոցիալական պաշտպանության մասին օրենսդրությունը լիարժեք չեն իրականացվում: Արհմիությունները, ձեռնարկատերերի արդյունաբերական միությունները և ձեռնարկատերերի ու արհմիությունների միջև բանակցությունների գործընթացները լավ զարգացած չեն:

***Արտաքին և անվտանգության քաղաքականության, հակամարտությունների կանխարգելման և ճգնաժամային իրավիճակի կառավարման ոլորտում համագործակցությունը***

Հայաստանը շարունակել է Ընդհանուր արտաքին և անվտանգության հայտարարագրերին միանալու հետ կապված միջոցառումների իրականացումը: 2010 թվականին Հայաստանը համաձայնել է միանալ ԵՄ արտաքին և անվտանգության ընդհանուր քաղաքականության 44 հայտարարություններից 28-ին: 2010 թվականին Հայաստանի կառավարության հետ տեղի է ունեցել ինտենսիվ քաղաքական երկխոսություն: 2010թ. հունիսին և սեպտեմբերին ԵՄ և Հայաստանի միջև տեղի են ունեցել քաղաքական և անվտանգության կոմիտեի քաղաքական երկխոսության երկու հանդիպումներ և մի շարք բարձր մակարդակի երկկողմ այցելություններ:

Հայաստանը շարունակել է ՄԱԿ-ի հետ համագործակցությունը, մասնակցել է ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրում և համագործակցել ՄԱԿ-ի թմրամիջոցների դեմ պայքարի գրասենյակի, Բնտերպոլի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, ԱՊՀ և Եվրոպայի խորհրդի փորձագետների հետ ահաբեկչության մասին տեղեկատվության փոխանակման նպատակով: Հայաստանը համագործակցում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1373 բանաձևի շրջանակներում ստեղծված ՄԱԿ-ի Հակաահաբեկչական կոմիտեի հետ:

Ոչ մի առաջընթաց չի արձանագրվել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի ստորագրման և վավերացման ուղղությամբ:

***Տարածաշրջանային համագործակցության ամրապնդում***

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման (այդ թվում ընդհանուր սահմանը բացելու հեռանկարները) մասին երկու արձանագրությունների վավերացումը կասեցվել է 2010 թվականի ապրիլին: ԵՄ շարունակում է իր աջակցությունը առանց նախապայմանների երկկողմ արձանագրությունների վավերացման և իրականացման հարցում:

2010 թվականին ԵՄ սկսել է Վրաստանում, Հայաստանում ու Ադրբեջանում Հարավային Կովկասի սահմանների միասնական կառավարման խթանումը (տես Գլուխ 5-ը՝ արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտում համագործակցության մասին): 2010 թվականին Կովկասի Տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը իրականացրել է մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ տեղեկատվության և հասարակության մասնակցության,

բնապահպանական քաղաքականության և տեղական բնապահպանական գործողությունների ծրագրերի ոլորտներում (տես Գլուխ 6 շրջակա միջավայրի վերաբերյալ):

***Նպաստում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը***

Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ բանակցությունները շարունակվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների թվով երեք երկկողմ հանդիպումների ժամանակ, որոնք տեղի ունեցան 2010 թվականին: Աստրախանում նոյեմբերին տեղի ունեցած հանդիպման ժամանակ Հայաստանի և Ադրբեջանի նախագահները համաձայնություն ձեռք բերեցին ռազմագերիների և գոհված զինծառայողների մարմիններ փոխանակման շուրջ: Կողմերը պետք է խիզախ քայլեր ձեռնարկեն՝ հակամարտությունը կարգավորելու բանաձևը գտնելու համար:

2010 թվականի աշնանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները ինտենսիվ գործողություններ ձեռնարկեցին՝ կազմակերպելով ԵԱՀԿ փաստահավաք առաքելություն Շփման գիծ և Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներ: Դեկտեմբերին Աստանայում ԵԱՀԿ զագաթաժողովի ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի և Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների համատեղ հայտարարության մեջ ընդգծվել է, որ «ժամանակը եկել է ավելի վճռական ջանքեր գործադրելու, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը լուծելու համար», և որ հակամարտության խաղաղ կարգավորման միակ ճանապարհն է՝ տարածաշրջանում ժողովուրդների միջև իրական հաշտեցման համար: Սակայն, լարվածությունը մնում է, և իրավիճակը շարունակում է մնալ անկայուն: Շարունակվում է ստացվել տեղեկատվություն շփման գծում կրակի փոխանակման ու մահվան դեպքերի մասին, ինչը մտահոգության լուրջ թեմա է:

Ի լրումն ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից վարած բանակցությունների, հունիսին սկսվել է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են միջոցառումներ՝ կարգավորման հարցում ներգրավված լրատվամիջոցների, հանրային քաղաքականության և խմբերի մասնակցությամբ:

**3. ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ**

***Մակրոտնտեսական համակարգ և գործող շուկայական տնտեսությունը***

2010 թվականին տնտեսական գործունեությունը վերականգնվել է խորն անկումից (2009 թվականին արձանագրված համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 14.2%), թեև վերականգնման գործընթացը ընթանում էր դանդաղ: ՀՆԱ աճը կազմել է մոտ 2,6%, ինչը պայմանավորված է ծառայությունների և արդյունաբերության վերականգնմանը, չնայած հարկաբյուջետային խթանման

աստիճանաբար վերացման և անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով գրանցված գյուղատնտեսական արտադրանքի աննախադեպ անկման: Տնտեսական վերականգնումը դրական ազդեցություն ունեցավ գործազրկության մակարդակի վրա, որը 2010 թվականի սկզբին ընկել է 7.3-ից 6.7%: Աճի հեռանկարները դեռևս անորոշ են արտահանումների դիվերսիֆիկացման բացակայության պատճառով, հարևան երկու երկրների հետ փակ սահմանների, մասնավոր հատվածում մրցակցության բացակայության և գործարար միջավայրի բարելավման անհրաժեշտության հետևանքով:

Տեղական և արտաքին մատակարարման ցնցումները, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի կտրուկ անկումը 2010 թվականի դեկտեմբերին նպաստեց մինչև 8.1% գնաճի նախորդ տարվա համեմատությամբ: 2010 թվականի մայիսից Հայաստանի Կենտրոնական բանկը սահմանեց անփոփոխ տոկոսադրույք՝ 7.25%, քանի որ վերականգնման գործընթացը դանդաղել էր 2010 թվականի երկրորդ կեսին, և գնաճային ճնշումները սահմանված չէին պահանջարկով: 2010 թվականին իշխանությունները շարունակում են գործադրել ջանքեր՝ դրամավարկային քաղաքականության ուղիները բարելավելու համար: Այս նպատակով նախապատրաստական աշխատանքներ էին իրականացվել իրացվելիության ակտիվ կառավարման և դրամային արժեթղթերով արտահայտված գործարքների զարգացման ուղղությամբ: Ապադոլարիզացիայի խրախուսմանն ուղղված միջոցառումները հանգեցրին որոշ դրական արդյունքների: Ապահովագրության և մասնավոր ներդրումային հիմնադրամների հետ կապված նոր իրավական ակտերը ներկայացվել էին խորհրդարան: Գնաճի վրա երկարատև ազդեցություն ունենալու համար պետք է ընդլայնել դրամավարկային և փոխարժեքի քաղաքականության արդյունավետությունը, և պետք է խրախուսել մրցակցությունը ներքին շուկայում:

2010 թվականին արտաբյուջետային պակասորդը նվազել է 2009 թվականի ՀՆԱ-ի 4.9%-ից մինչև ՀՆԱ 7,9%՝ արտացոլելով տնտեսության վերականգնումը ու հարկաբյուջետային քաղաքականության ամրապնդումը: Սակայն, պետական պարտքի և ՀՆԱ հարաբերակցությունը գրեթե եռապատկվեց, հակաշրջանառու միջոցառումների և միջազգային հանրության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության (ֆինանսական օգնության՝ իշխանությունների տնտեսական ծրագրերի վարկավորման միջոցով) արդյունքում՝ աճելով 2008 թվականի ՀՆԱ 16.1%-ից մինչև 2010 թվականի ՀՆԱ 44%: Պետական պարտքի արտաքին բաղադրիչը կազմում է ընդհանուր պետական պարտքի մոտ 90%-ը, դրանով իսկ մեծացնելով փոխարժեքի խոցելիությունը և կախվածությունը արտոնյալ ֆինանսավորումից՝ հետագա ֆինանսավորման պահանջները հաշվի առնելու համար: Ֆինանսավորումը ամրապնդելու ու պարտքը մարելու նպատակով, 2010 թվականին իշխանությունները կրկին ներդրեցին և ամրապնդեցին միջնաժամկետ ծախսերի շրջանակները և ընդունեցին պարտքի կառավարման նոր ռազմավարություն: Միևնույն ժամանակ, նրանք ներկայացրեցին նոր լայնածավալ հարկային բարեփոխումների օրակարգ՝ ուղղված հարկային և մաքսային վարչարարության արդիականացմանը և հարկատուների կամայական վերաբերմունքի վերացմանը: Հաշվի առնելով, որ 2010 թվականի դեկտեմբերի

հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 16.2%, հարկերի հավաքագրման բարելավումը կլինի վճռորոշ հարկաբյուջետային համախմբման և պարտքի կայունության համար:

Ներդրումների և տրանսֆերտների վերականգնումը 2010 թվականին բավականին թույլ էր: Բացի այդ, չնայած մետաղների գների աճին, արտահանման աճը չափավոր էր՝ Եվրոպայում Հայաստանից արտահանման պահանջի սակավ լինելու պատճառով: Արդյունքում, 2010 թվականին ընթացիկ հաշվի դեֆիցիտը մնաց շատ բարձր. այն ընկել էր 2009 թվականի ՀՆԱ 16% -ից մինչև ՀՆԱ 14,6%: Կառավարությունը հաստատեց մի շարք միջոցառումներ՝ մրցակցությունն ամրապնդելու և առևտրի արգելքները նվազեցնելու համար: Այնուամենայնիվ, այդ միջոցառումներն իրականացնելուց հետո պետք է ավելի ինտենսիվ ջանքեր գործադրել արտահանման բազմազանեցում խրախուսելու և ավելի բաց ու թափանցիկ առևտրի ռեժիմ ստեղծելու համար: 2010 թվականին վերականգնման հետևանքով սոցիալական ծախսերի ավելացումը ավելի չափավոր էր 2009 թվականի համեմատ: Սակայն, համախառն ներքին արդյունքի տոկոսային առումով, սոցիալական ծախսերը մնացին նախաձգնաժամային մակարդակներից բարձր: Սոցիալական ծախսերի սահմանումը արդեն զգալիորեն բարելավվել է, և իշխանություններն աշխատում են բարելավել սոցիալական ծրագրերի ընդգրկվածությունը, որոնք ներկայումս կազմում են աղքատության միայն մոտ 35%:

### ***Զբաղվածություն և սոցիալական քաղաքականություն***

Տնտեսական ճգնաժամի արդյունքում 2010 թվականին **աղքատության կրճատմանն** ուղղված Կայուն զարգացման ծրագրի իրականացումը հետաձգվել է:

2010 թվականի վերջում գործազրկության մակարդակը տարեսկզբի 7.0%-ից ընկել է 6.7% : Այն հատկապես շարունակում էր ազդեցություն ունենալ երիտասարդների և կանանց վրա՝ կազմելով գործազրկության մակարդակի 19% և 75% համապատասխանաբար: Հաշմանդամները շարունակում են տուժել զբաղվածության ցածր մակարդակի հետևանքով:

2010 թվականի հունիսին Հայաստանի Աշխատանքային օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ՝ սոցիալական երկխոսության հետ կապված: Օրենքի համաձայն, արհեստակցական միությունները հանրային խորհրդակցությունների ու գործադուլների հետ կապված ձեռք են բերում բացառիկ իրավունքներ (ի լրումն աշխատողի ընդհանուր իրավունքների): Արհեստակցական միությունների խոսքերով, փոփոխություններն ուղղված են գործարար միջավայրի բարելավմանը, այլ ոչ թե աշխատողների սոցիալական վիճակի բարելավմանը: 2010 թվականի հունիսին Հայաստանում ընդունվել են աշխատանքի տեսչության մասին օրենքում փոփոխությունները: 2007-2011 թվականներին Հայաստանը շարունակել է պատշաճ իրականացնել «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը: Ստեղծվել է աշխատանքային խումբ, որը կպատրաստի կանոնավոր զեկույցներ՝ այս ոլորտում ԵՄ սոցիալական

խարտիայի դրույթների իրականացման և ԵՄ օրենսդրության պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ:

2010 թվականի դեկտեմբերին Մոնցիալական ներգրավվածության և պաշտպանության ոլորտում Հայաստանն ընդունեց պետական կենսաթոշակների մասին օրենքում փոփոխությունները և իրավական ակտերի փաթեթը՝ ապահովելու անցումը դեպի կուտակային կենսաթոշակային համակարգ, այդ թվում՝ հաստատեց նվազագույն եկամուտ նրանց համար, ովքեր չեն կատարել վճարումներ, ինդեքսավորվել ըստ սպառողական գների ինդեքսի, և ում բազային կենսաթոշակը հիմնված է տարեկան վճարումների վրա, ինդեքսավորվել են ըստ սպառողական գների ինդեքսի և կուտակային կենսաթոշակային կումպոնենտում, որտեղ արտացոլվել են անհատականվճարումները, որոնք հատկացվել են և վճարվում են տարեկան վճարի տեսքով:

#### **4. ԱՌԵՎՏՐՈՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԻՄՆԱԽՆՈՒՄՆԵՐԸ, ՇՈՒԿԱՑԱԿԱՆ և ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ**

2010 թվականին **երկկողմ առևտուրը** աճել է 17%-ով 2009 թվականի համեմատությամբ: ԵՄ-ից արտահանումները Հայաստան աճել են 4.2%, իսկ Հայաստանից ապրանքների արտահանումը ԵՄ աճել է 59,9%: Ապրանքաշրջանառության առումով, սակայն, Հայաստանից արտահանումները ԵՄ դեռևս կենտրոնացված են ցածր հավելյալ նշանակության մի շարք ապրանքատեսակների վրա (մասնավորապես, 2010 թվականին Հայաստանից ԵՄ թանկարժեք մետաղների արտահանման ծավալը կազմել է 61,9%, իսկ մարգարիտների ու թանկարժեք քարերի արտահանման ծավալը՝ 19,1%): ԵՄ Արտոնությունների ընդհանրացված համակարգի (GSP) շրջանակներում Հայաստանը շարունակել է օգտվել կայուն զարգացման և արդյունավետ կառավարման համար խթան հանդիսացող հատուկ պայմանավորվածությունից՝ **GSP+**: Հայաստանի իշխանությունները շարունակում են ջանքեր գործադրել՝ բարձրացնելու իրազեկությունը գործարար համայնքում «GSP+»-ի մասին և ԵՄ արտահանման տեղեկատուի մասին՝ Հայաստանում արտահանման գործընթացը բարելավելու նպատակով:

Հայաստանում հարկային և մաքսային համակարգը ակոնոլային ապրանքների հետ կապված դեռևս չի համապատասխանում ԱՀԿ պարտավորություններին (տես հարկման հետ կապված գլուխը):

Հայաստանը շարունակել է Եվրոպական հանձնաժողովի կողմից 2009 թվականին անցկացված փաստահավաք առաքելության առաջարկությունների կատարումը՝ ԵՄ հետ Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցություններին պատրաստվելու համար: 2010 թվականի ընթացքում, կառավարությունը մշակել և հաստատել է որակի ենթակառուցվածքի՝ բարեփոխման ռազմավարությունը ու մշակել ռազմավարություններ՝ սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման և մտավոր սեփականության ոլորտում բարեփոխումների իրականացման վերաբերյալ: Սակայն, նկատելի առաջընթաց է անհրաժեշտ կարգավորման ենթակա կարևորագույն ոլորտներում՝ բանակցությունները սկսելու համար նախապայմանները բավարարելու համար: Ինստիտուցիոնալ կառուցվածքը բանակցային գործընթացի համար լիարժեք գործառնական դարձնելը և վարչարարական կարողությունների զարգացումը նույնպես հանդիսանում են լուրջ խնդիր:

Հայաստանը շարունակել է բարելավել **մաքսային** ծառայության ինստիտուցիոնալ կարողությունները: 2010 թվականի ապրիլից Պետական եկամուտների կոմիտեում տեղադրվել է «Մալբերի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը՝ մաքսային և այլ պետական մարմինների միջև համակարգումն ապահովելու նպատակով: Այն հնարավորություն է տալիս միացնել բոլոր մաքսատները և մաքսային անցակետերը՝ փաստաթղթերի միասնական հոսքի միջոցով: Մաքսային ծառայությունը շարունակեց նորացնել ռիսկերի կառավարման համակարգը՝ ամրապնդելով համագործակցությունը տարբեր ներքին վարչությունների միջև և կազմակերպելով լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ: 2010 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում Պետական եկամուտների կոմիտեում ստեղծվել են երեք նոր մաքսային գրասենյակներ, մեկ մաքսային կետ, և մեկ նոր մաքսային պահեստ՝ խնայելու մաքսազերծման հետ կապված ժամանակը և թղթատարությունը: Մաքսային գնահատման ստուգման ընթացակարգերը դեռևս մտահոգության թեմա են: Հետագա բարելավումներ են անհրաժեշտ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռիսկերի կառավարումը, ամբողջականությունը, արտոնյալ ծագման վկայականների ստուգումը, այլ իրավապահ մարմինների հետ համագործակցությունը և միջազգային մաքսային փաստաթղթերին ծանոթանալու հնարավորությունը, ինչպես նաև մաքսային մարմինների դերը մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ոլորտում:

Առաջընթաց է արձանագրվել նաև **ապրանքների ազատ տեղաշարժի և տեխնիկական կանոնակարգերի** ոլորտում: Մասնավորապես, դեկտեմբերին կառավարությունը հաստատել է Հայաստանի 2010-2020թթ. որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությունը շահագրգիռ կողմերի հետ ծավալուն խորհրդակցություններից հետո:

Մանիտարիայի և բուսասանիտարիայի հարցերում, Հայաստանը շարունակում է սննդի անվտանգության ռազմավարության և գործողությունների ծրագրի հետ կապված նախապատրաստական աշխատանքները: Մշակվել են հորիզոնական

օրենսդրությունը, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության մասին օրենքում, անասնաբուժության մասին օրենքում և սննդի հաստատությունների գրանցման մասին օրենքում փոփոխությունները: 2010 թվականի դեկտեմբերին ստեղծվել է սննդի անվտանգության միասնական գործակալություն և վերազինվել են գործակալության լաբորատորիաները: 2010 թվականի հունիսին Հայաստանը միացել է պարենի և անասնակերերի ԵՄ արագ արձագանքման համակարգի արտաքին պատուհանին: 2010 թվականի հունվարին Հայաստանը արտահայտեց իր հետաքրքրությունը դեպի ԵՄ արտահանման ծավալները ընդլայնելու մասին՝ ներառելով նաև ձկան ու ձկնեղենի տեսականի: Մշակվել է ակվակուլտուրայի հիվանդությունների հոկոդոլոգիայի համակարգ: ԵՀՔ Գործողությունների ծրագրի նպատակներն իրագործելու, առևտրատնտեսությունը խթանելու և Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր շուրջ բանակցություններին նախապատրաստվելու համար, Հայաստանը պետք է զգալի առաջընթաց արձանագրի օրենսդրության և դրա կիրարկման ոլորտում, ինչպես նաև ամրապնդի կարողությունները և համակարգումը հաստատությունների միջև:

Գործարար միջավայրի, դրա ստեղծման և ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենքի հետ կապված գործարար միջավայրի բարելավմանը ուղղված նոր Գործողությունների ծրագիրը հաստատվեց 2010 թվականի սկզբին: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, անհատ ձեռնարկատերերի և պետական տուրքի օրինագծերում փոփոխությունների, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների, որոնք նախապես հաստատվել է կառավարության սեպտեմբերի նիստում, հաստատումը հետաձգվել է: Կորպորատիվ կառավարման օրենսգրքում փոփոխություններ են կատարվել Միջազգային ֆինանսական կորպորացիայի գլոբալ կորպորատիվ կառավարման Ֆորումի առաջարկությունների հիման վրա: 2010 թվականի դեկտեմբերին նշված փոփոխությունները հաստատվել են կառավարության կողմից: Համաշխարհային բանկի հրապարակած «Գործարարություն-2011» տարեկան զեկույցում Հայաստանը հետընթաց է արձանագրել՝ աշխարհի 183 երկրների շարքում հայտնվելով 48-րդ տեղում, չնայած միջսահմանային առևտրում առկա բարելավումներին: Ֆինանսական ծառայությունների ոլորտում, Հայաստանի ԿԲ շարունակել է ջանքեր գործադրել իրականացնելու Բազել II-ի սկզբունքները՝ բանկային արդյունավետ վերահսկողության սահմանելու նպատակով: Բանկային հատվածը շատ լավ կապիտալացված է և ցուցաբերում է ճկունություն լարվածության թեստերի նկատմամբ: Չաշխատող վարկերի հարաբերակցությունը 2010 թվականի օգոստոսին 2009 թվականի 10%-ից հասել է 5%: Այնուամենայնիվ, ֆինանսական միջնորդության ցուցանիշը մնում է ցածր, մասնավոր հատվածի հետ վարկային հաշվառումը կազմում է ՀՆԱ-ի շուրջ 24%-ը: Ճգնաժամի արդյունքում ավելացել է նաև արտարժույթով վարկավորումը, բացահայտելով բանկերի անուղղակի վարկային ռիսկերը: Իշխանությունները քայլեր են ձեռնարկում ապահովելու ռիսկերը կառավարվումը, սակայն կարիք կա շարունակելու ամրապնդումը ֆինանսական հատվածի վերահսկողության առումով՝ բանկային համակարգի նկատմամբ առողջ վստահությունը պահպանելու և խափանումների նկատմամբ ճկունություն բարելավելու համար:

Օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը բանկային հատվածում շարունակում է բարձր մնալ:

### ***Այլ հիմնական ոլորտները***

Հարկային ոլորտում, Հայաստանը դեռ պետք է ընդունի հարկային օրենսգրքի համախմբված տարբերակը: Հոկտեմբերին, Հայաստանում հաստատվեցին ակցիզային հարկի մասին օրենքում, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարի հարկերի մասին օրենքում, ավելացված արժեքի հարկի մասին օրենքում, ներքին շուկայի պաշտպանության մասին օրենքում փոփոխությունները: Հայաստանի ալկոհոլային ապրանքների հարկային և մաքսային համակարգը դեռևս չի համապատասխանում ԱՀԿ պահանջներին, և համակարգում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ: 2008-2011 թթ. հարկային վարչարարության ռազմավարության իրականացումը շարունակվել է 2010 թվականին՝ հատուկ ուշադրություն դարձնելով էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ստեղծման, ռիսկերի վրա հիմնված ստուգումների անցկացման և հարկ վճարողների էլեկտրոնային տվյալների բազայի մշակման վրա: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում, Հայաստանը Եվրամիության տասնվեց անդամ երկրների հետ կնքեց երկակի հարկման բացառման համաձայնագրեր, որոնցից տասնհինգն արդեն վավերացվել և մտել են ուժի մեջ:

2010 թվականին տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը շարունակել է ջանքեր գործադրել ամրապնդելու **մրցակցության քաղաքականության** իրավական և ինստիտուցիոնալ դաշտը: Օրենսդրական փոփոխությունների (որոնց հետ կապված թե Եվրոպական հանձնաժողովը և թե Համաշխարհային բանկն ունեն իրենց ներդրումները) վերաբերյալ շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվությունները սկսվել են 2010 թվականի սեպտեմբերին: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը մշակել է 2010-2012թթ ռազմավարական ծրագիր՝ ուղղված մրցակցային միջավայրը բարելավմանը: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը թուլացված է ֆինանսական անկախության բացակայության պատճառով: Մինչ օրս, **պետական օժանդակության** համակարգի ներդրման հետ կապված առաջընթացը շատ սահմանափակ է:

Մտավոր սեփականության ոլորտում, ապրանքային նշանների ու աշխարհագրական ցուցումների մասին նոր օրենքները ուժի մեջ են մտել 2010 թվականի հուլիսին: Ապրանքային նշանի մասին օրենքի կիրարկման օրինագիծը ներկայացվել էր կառավարություն: Գյուտերի, մոդելների և արդյունաբերական նմուշների մասին օրենքում փոփոխությունների նախագիծը 2010 թվականի օգոստոսին ներկայացվել է կառավարության: Հայաստանը դեռ պետք է վավերացնի բույսերի տեսակների պահպանության միջազգային կոնվենցիան: Նախապատրաստվելով վավերացմանը, Հայաստանը մշակել է նոր բուսատեսակների պաշտպանության մասին օրենքը, որը պետք է լինի Բույսերի տեսակների պահպանության միջազգային կոնվենցիայի հետ համատեղելի:



Հայաստանը մշակել է Վարչական իրավախախտումների օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրինագիծը, որի նպատակն է կրկին ամրապնդելու մտավոր սեփականության պաշտպանության վերաբերյալ դրույթները: Ծրագրային կեղծարարության ոլորտում 2010 թվականի մայիսին անկախ փորձագիտական կազմակերպության ուսումնասիրության արդյունքում Հայաստանը զբաղեցնում է հինգերորդ տեղը: Կեղծված ծրագրերի ծավալը կազմել է 90%՝ 2006 թվականի 95% և 2009 թվականի 92% համեմատությամբ: Հայաստանի իշխանությունները մշակել են մտավոր սեփականության իրավունքի կիրառման ռազմավարություն և գործողությունների պլան: Այս նախագծերը, սակայն, պետք է բերվեն վերջնական տեսքի: 2010 թվականին կառավարությունը Պետական գնումների մասին օրենքի նախագիծը ներկայացրեց խորհրդարան: Հայաստանն ավարտել է ԱՀԿ Պետական գնումների համաձայնագրին շուրջ բանակցությունները: 2010 թվականին Պետական գնումների համաձայնագրի կոմիտեն հավանություն է տվել համաձայնագրին միանալու Հայաստանի պայմաններին, որը ենթակա է ընդունման Գնումների մասին օրենքով Պետական գնումների համաձայնագրին համապատասխան: 2010 թվականին Հայաստանը նախաձեռնել է հանրային գնումների էլեկտրոնային մրցութային համակարգի մշակման աշխատանքները:

Հայաստանում առաջընթաց է գրանցվել **հաշվապահական հաշվառման** ոլորտում: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ֆինանսական հաշվետվությունների համակարգերը դարձել են պարտադիր փոքր ու միջին ձեռնարկությունների համար՝ 2010 թվականի մարտին և սեպտեմբերին համապատասխանաբար: Հայաստանն ընդունել է հաշվառման մասին օրենքի նախագիծը: Չկան զարգացումներ հաշվապահական հաշվառման և **աուդիտի** անկախ կարգավորող մարմին ստեղծելու հետ կապված:

**Վիճակագրության** ոլորտում վերանայվել է Հայաստանի տնտեսական գործունեության ազգային դասակարգիչը՝ Եվրոպական համայնքի տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգիչի հետ համատեղելի դարձնելու նպատակով: 2010 թվականին Ազգային վիճակագրական ինստիտուտը մշակել և ընդունել է «Վիճակագրության համար տարածքային միավորների Հայաստանի դասակարգիչը» ԵՄ հիմնական մեթոդական երաշխավորություններին ու սկզբունքներին համապատասխան: Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները վիճակագրության վերաբերյալ պայմանականորեն կնքվել են 2010 թվականի նոյեմբերին:

**Ձեռնարկությունների քաղաքականության** ոլորտում արձանագրվել է որոշ առաջընթաց: 2010 թվականի հոկտեմբերին, Հայաստանում ընդունվեցին փոքր և միջին ձեռնարկատիրություններին պետական աջակցության մասին օրենքում փոփոխությունները: Կառավարությունը հատկացրեց 150 մլն դրամ (278,000 եվրո) Փոքր և միջին ձեռնարկատիրությունների զարգացման ազգային կենտրոնին շարունակելու Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրությունների զարգացմանն աջակցելը՝ տրամադրելով օգնություն տեխնիկական, ֆինանսական և միջազգային համագործակցության տեսքով: Հայաստանի փոքր և միջին

ձեռնարկատիրությունների զարգացման ազգային կենտրոնի թեժ գծով ստացվել են բազմաթիվ հարցումներ, բողոքներ և առաջարկություններ: Այս հաղորդագրություններին ավելի լավ արձագանքելու նպատակով, Հայաստանի զարգացման ազգային կենտրոնը հարկային և մաքսային ծառայությունների, արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության և հողի գրանցման գործակալության հետ սահմանեց համագործակցության մեխանիզմ: Փոքր և միջին ձեռնարկատիրությունները դեռևս գտնվում են ծանր պայմաններում, չնայած հարկային և մաքսային բարեփոխումներին, և անհրաժեշտ է իրականացնել բարելավումներ տեղեկատվության մատչելիության ուղղությամբ:

Պետական ներքին ֆինանսական հսկողության ոլորտում, 2010 թվականի դեկտեմբերին խորհրդարանի կողմից ընդունվել է ներքին աուդիտի մասին օրենքը՝ ստեղծելով լիարժեք իրավական հիմք ֆինանսական կառավարման ու վերահսկողության և ներքին աուդիտի կենտրոնական ներդաշնակեցման ընկերության գործունեության համար, որը արդեն ստեղծվել էր 2010 թվականի հունիսին ՀՀ ֆինանսների նախարարության կազմում: 2010 թվականի նոյեմբերին կառավարությունն ընդունեց 2010-13թթ. քաղաքականության փաստաթուղթը և գործողությունների ծրագիրը, որը նախատեսում է կառավարչական պատասխանատվության իրականացումը: Ինչ վերաբերում է **արտաքին աուդիտին**, վերահսկիչ պալատը սկսել է համագործակցությունը Նիդեռլանդների պետական աուդիտի ինստիտուտի հետ՝ աուդիտորական գործունեությունները միջազգային կազմակերպության բարձրագույն վերահսկիչ մարմինների չափանիշներին համախառնախանցնելու նպատակով, միաժամանակ համագործակցելով ՄԻԳՄԱ-ի հետ սեփական ռազմավարական զարգացման ծրագիր շուրջ:

**5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐՈՒՄ**

ԵՄ -Հայաստան Արդարադատության, ազատության և անվտանգության ենթակոմիտեի առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2010 թվականի հուլիսին Երևանում: Հանդիպման ժամանակ կողմերը ստանձնել են պատրաստակամություն խորացնելու քաղաքականության այս ոլորտում երկկողմ հարաբերությունները: Սկսվել էին քննարկումներ ԵՄ, Հայաստանի և մի խումբ շահագրգիռ ԵՄ անդամ պետությունների միջև՝ ԵՄ և Հայաստանի միջև Մարդկանց տեղաշարժի և գործընկերություն ստեղծելու վերաբերյալ:

2010 թվականի նոյեմբերին Հայաստանում ընդունվել է սահմանային անվտանգության և սահմանների համապարփակ կառավարման ռազմավարությունը, որը պետք է իրականացվի ըստ գործողությունների պլանով սահմանված ժամանակացույցի: 2010 թվականի սեպտեմբերին Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի շրջանակներում Հայաստանը հյուրընկալեց երկկողմ աշխատաժողով՝ նվիրված Վրաստանի հետ

**սահմանների համալիր կառավարման** ռազմավարության խնդիրներին: Շարունակվել են աշխատանքները Վրաստանի հետ սահմանագծման ուղղությամբ, սահմանային պահակախմբի անձնակազմի հետագա մասնագիտական վերապատրաստման, այդ թվում գորակոչի համակարգի վերացման ուղղությամբ:

Շարունակվել է աշխատանքը **միգրացիայի և ապաստանի** Ազգային գործողությունների ծրագիր հետ կապված: ԵԱՀԿ և Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ Հայաստանում պետական պաշտոնյաների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ կենսաչափական և ինքնությունը հաստատող փաստաթղթերի հսկողության վերաբերյալ՝ կանխելու ինքնությունը հաստատող փաստաթղթերի կեղծման, անկանոն միգրացիայի, մաքսանենգության և մարդկային թրաֆիքինգի դեպքերը: Լավ առաջընթաց է գրանցվել փաստաթղթի պաշտպանվածության ոլորտում՝ իրականացնելով նախապատրաստական ախատանքներ կենսաչափական անձնագրերի ներդրման հետ կապված: Մշակվել են Հայաստանի անձնագրերի և ինքնությունը հաստատող փաստաթղթերի կենսաչափական պարամետրերի նկատմամբ տեխնիկական պահանջները, և սկսվել է ծառայությունների գնման մրցույթը:

**Կազմակերպված հանցագործության** դեմ պայքարի հետ կապված 2010 թվականի սեպտեմբերին Հայաստանը ստորագրել է 2007 թվականի Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիան: Բացի այդ, Հայաստանը պետք է միանա Միավորված ազգերի կազմակերպության հրազենի, դրա մասերի և բաղադրամասերի ապօրինի արտադրության, և թրաֆիքինգի անդրազգային կազմակերպված հանցագործության մասին կոնվենցիային կից երրորդ լրացուցիչ արձանագրությանը: Շարունակվում է միջգերատեսչական աշխատանքը կազմակերպված հանցագործություն դեմ պայքարի ազգային ռազմավարություն մշակման ուղղությամբ:

Հայաստանը շարունակել է ջանքեր գործադրել **մարդկանց թրաֆիքինգի** վերացման համար սահմանված նվազագույն ստանդարտներն իրագործելու ուղղությամբ: Ընդունվել է համապատասխան իրավական ակտ, որը նախատեսում է թրաֆիքինգի համար դատապարտված հանցագործների նվազագույն պատժի խստացում, նրանց ունեցվածքի բռնագրավում և թրաֆիքինգի գոհերի նկատմամբ՝ թրաֆիքինգի ենթարկվելու արդյունքում կատարված հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից ազատում: Թրաֆիքինգի գոհերին կառավարությունը հատկացրեց որոշ ֆինանսական միջոցներ և արձանագրեց որոշ առաջընթաց թրաֆիքինգի գոհերի ուղղորդման ազգային մեխանիզմի ներդրման ուղղությամբ: Մարդկանց թրաֆիքինգի հարցը ընդգրկվել է Հայաստանի դպրոցական ուսումնական ծրագրերում:

**Թմրանյութերի դեմ պայքարի** ոլորտում, 2010-12թթ. թմրամիջոցների և թմրամիջոցների թրաֆիքինգի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում 2010 թվականի հուլիսին ընդունվել է գործողությունների ծրագիրը: Այն ներառում

Էր վերականգնման հետ կապված կոնկրետ միջոցառումներ: Գործողությունների ծրագրում նախատեսված է նաև ՀՀ առողջապահության նախարարության կազմում մոնիտորինգի և գնահատման համակարգի ստեղծում՝ վերականգնման միջոցառումների ազդեցությունը գնահատելու նպատակով: Այս առումով, կարողությունների զարգացումը, տվյալների հավաքագրումը և միջազգային համագործակցությանը հանդիսանում են առանցքային խնդիրներ: 2010 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ ոստիկանությունը կազմակերպեց «Կակաչ կանեփ - 2010» ազգային իրազեկման կանխարգելիչ արշավը: 2010 թվականի հոկտեմբերին Հայաստանը մասնակցել է Բրյուսելում Թմրամիջոցների և թմրամոլության դեմ պայքարի եվրոպական մոնիտորինգի կենտրոնի կողմից կազմակերպված Եվրոպական հարևանության քաղաքականության տարածաշրջանային սեմինարին, որի ժամանակ ներկայացվել է Եվրամիության թմրամիջոցների վերահսկման համակարգը:

**Փողերի լվացման** դեմ պայքարի ոլորտում 2010 թվականի սեպտեմբերին MONEYVAL-ի կողմից ընդունվել է Հայաստանի զեկույցը՝ 2009 թվականի սեպտեմբերին ընդունված երրորդ ռաունդային փոխադարձ գնահատման զեկույցից բխող առաջարկությունների իրականացման մասին, մասնավորապես, Ֆինանսական գործողությունների աշխատանքային խմբի հիմնական առաջարկությունների իրականացման մասին: Կենտրոնական բանկը կառավարությանն է ներկայացրել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու նախագծը, որը ղեկավարելու փոփոխվել է խորհրդարանի կողմից: Տեխնիկական և մարդկային ռեսուրսների միավորումը՝ փողերի լվացման, կոռուպցիայի և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համար, մնում է գերակա խնդիր:

**Ոստիկանության և դատական համագործակցության** ոլորտում Հայաստանը պետք է վավերացնի Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը: Հայաստանը նաև պետք է ստորագրի Հաագայի երկու առանցքային կոնվենցիաներ միջազգային դատական համագործակցության վերաբերյալ, մասնավորապես՝ 1965 թվականի Փաստաթղթերի ծառայության մասին կոնվենցիան և 1970 թվականի Քաղաքացիական կամ առևտրային գործերով արտասահմանում ապացույցներ հավաքելու մասին կոնվենցիան: Որևէ առաջընթաց չի կարող արձանագրվել Հայաստանի ընտանեկան իրավունքի վերաբերյալ մի շարք կարևոր միջազգային կոնվենցիաներին միանալու առնչությամբ, ինչպես օրինակ՝ Երեխաների առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին 1980 թվականի Հաագայի միջազգային կոնվենցիան և Ծնողական պատասխանատվության և երեխաների պաշտպանության մասին 1996 թվականի կոնվենցիան: Նոյեմբերին, Հայաստանը ստորագրել է համագործակցության համաձայնագրի՝ Լեհաստանի ոստիկանության և դատական իշխանությունների հետ համագործակցությունը ամրապնդելու վերաբերյալ, մինչդեռ Գերմանիայի հետ նման համաձայնագիր սպասում է իր ստորագրմանը 2011 թվականի սկզբից:

**Տվյալների պաշտպանության** ոլորտում, 2011 թվականի ապրիլին Հայաստանը ստորագրել է 1981 թվականի ֆիզիկական անձանց պաշտպանության մասին կոնվենցիան՝ հաշվի առնելով անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր և վերահսկողության մարմինների և սահմանային տվյալների հոսքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը:

**6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԱԷՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանը սկսել է իրականացնել 2009-2020թթ. տրանսպորտի ոլորտի զարգացման ռազմավարությունը: Ինչ վերաբերում է ենթակառուցվածքային քաղաքականությանը, Հայաստանն առաջընթաց է արձանագրել Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի (2009-2017թթ) և Երևան-Թբիլիսի երկաթգծի վերականգնման հարցերում:

Նորաստեղծ ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդը իր առաջին նիստը անցկացրեց 2010 թվականի սեպտեմբերին: Ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարությունը հաջողությամբ իրականացնելու շնորհիվ 2010 թվականին նվազել է ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառով զոհերի թիվը: Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ճանապարհային տրանսպորտի համաձայնագրին, որի շրջանակներում տեղադրվել է թվային տախոգրաֆ՝ ավտոմեքենայի վարման և հանգստի ժամանակը գրանցելու համար, Հայաստանը չի իրականացնել համաձայնագրով սահմանված բոլոր միջոցառումները կապված վարորդական քարտերի թողարկման, սպասարկման կետերի, սեմինարների և երթակարգավարների հետ մինչև սահմանված ժամկետի վերջը՝ 2010 թվականի դեկտեմբերի 31-ը:

Օդային հատվածում Հայաստանը ամբողջովին չի վերացրել սահմանափակող առևտրային և կարգավորող միջոցառումները՝ ավիացիայի արդյունավետությունը և կապակցվածությունը բարելավելու նպատակով:

Հայաստանը և ԵՄ մեկնարկեցին իրենց **Էներգետիկ** երկխոսությունը, մասնավորապես, Էներգետիկայի առաջին ենթակոմիտեի նիստի շրջանակներում, որը տեղի ունեցավ 2010 թվականի հոկտեմբերին Երևանում: Հայաստանը իրականացնում է Մեծամորի ատոմակայանի անվտանգության բարձրացման միջոցառումները և շարունակում է ատոմակայանի շահագործումից հանելու հիմնադրամի կուտակումը՝ նկատի ունենալով 2016 թվականին ԱԷԿ-ը շահագործումից հանելը: ԵՄ շարունակում է հորդորել Հայաստանին փակել ատոմակայանը հնարավորինս շուտ, մինչև նախատեսված ժամկետը, քանի որ Մեծամորի ատոմակայանը չի կարող արդիականացվել այնքան, որպեսզի համապատասխանի միջուկային անվտանգության միջազգային չափանիշներին:

2010 թվականի օգոստոսին Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրվել է միջկառավարական համաձայնագիր՝ 2012 ու 2018 թթ ընթացքում ատոմակայան

կառուցելու վերաբերյալ: Ծրագրում մասնակցում են Հայաստանի կառավարությունը և Ռոսատոմը (Ռուսաստան): Ծրագրի իրականացմանը կարող են մասնակցել այլ միջազգային ներդրողներ: 2010 թվականին Հայաստանում առաջընթաց է արձանագրել ապագա ԱԷԿ-ի տեխնիկական ուսումնասիրությունների ոլորտում, այդ թվում՝ հրապարակի սեյսմիկ վիճակին առնչվող հարցերի շուրջ ուսումնասիրությունները: Աշխատած միջուկային վառելիքի/ռադիոակտիվ թափոնների ռազմավարությունը և գործող ԱԷԿ-ի շահագործումից հանելու մանրամասն ծրագիրը դեռևս գտնվում են նախապատրաստման փուլում: Հայ-ռուսական համատեղ ընկերությունը շարունակում է ուրանի ռեսուրսների հնարավոր օգտագործման հետ կապված ուսումնասիրությունները:

2010 թվականի մայիսին Հայաստանը դիմել է Էներգետիկ համայնքի կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ստանալու համար: Խորհրդարանը ուսումնասիրել է էլեկտրաէներգիայի, գազի և էներգաարդյունավետության մասին իրավական ակտերում փոփոխություններ կատարելու նախագիծը: 2010 թվականի ապրիլին Հայաստանում բարձրացել է գազի սակագինը: Դրա արդյունքում սկսվել են ներքին նավթի ռեսուրսների հնարավոր օգտագործման գնահատման աշխատանքները:

Հայաստանը մշակել է էներգետիկ արդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման գործողությունների ծրագրի նախագիծը: Վերականգնվող աղբյուրների հետագա օգտագործում զարգացում կապրի: Բացի այդ, քննարկվում են (փոքր) հիդրո, քամի, ֆոտոզալվանային, երկրաջերմային և բիոէթանոլ կայանների հետ կապված հարցերը: Հայաստանը շարունակել է էլեկտրակայանների կառուցումը ու ուժեղացումը: 2010 թվականին ավարտվել է Աբովյանի ստորգետնյա գազի պահեստարանի ընդլայնման (իրագործումը պլանավորվում է) ուսումնասիրությունը: Հայաստանում շարունակվում է շենքերի ներքին գազատարների կառուցումը և հաճախորդներին գազի ցանցին միացումը: Բարձրացվել է նաև գազի ցանցի անվտանգությունը: Հայաստանը արդիականացրել է էներգացանցերը և առաջխաղացման է հասել Վրաստանի և Իրանի հետ նոր էներգետիկ կապի զարգացման ոլորտում: Հայաստանը և Իրանը նախաձեռնել են երկու պետությունների միջև նոր նավթային խողովակաշարի կառուցելու պլաններ:

**Կլիմայի փոփոխության** ոլորտում, Հայաստանը ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիային է ներկայացրել կլիմայի փոփոխության վերաբերյալ Ազգային երկրորդ ծրագիրը, որը ներառում է ջերմոցային գազերի հաշվառումը, մեղմացման ու ադապտացման միջոցառումները:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել Մաքուր զարգացման մեխանիզմի ծրագրերի մշակման ուղղությամբ, նույնիսկ եթե ոչ մի նոր ծրագրեր չի գրանցվել ՄԱԿ-ի մակարդակով (ընդհանուր քանակությամբ հինգ գրանցված ծրագրեր): Եվրոպական հանձնաժողովը շարունակում է աջակցել Հայաստանին Կիոտոյի արձանագրության իրականացման ուղղությամբ: ԵՄ խրախուսում է Հայաստանին

ամբողջովին իրականացնել Կանկուն համաձայնագիրը և, մասնավորապես, մշակել ցածր ածխածնային զարգացման ռազմավարությունը, այդ թվում՝ թարմացնել տեղեկատվությունը իրագործվող նպատակների կամ գործողությունները վերաբերյալ:

**Շրջակա միջավայրի** ոլորտում, Հայաստանը շարունակում է 2008-2012 թթ. շրջակա միջավայրի գործողությունների ծրագրի իրականացումը, մասնավորապես օրենսդրության մշակման ոլորտում: Սակայն, օրենսդրական դաշտը դեռևս լրամշակման կարիք ունի, մասնավորապես օրենսդրության կիրարկման առումով: Մշակման փուլում են գտնվում շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենքը և շրջակա միջավայրի փորձաքննության ու մոնիտորինգի վերաբերյալ օրենսդրությունը: Օդի որակի վերաբերյալ օրենսդրության հետ կապված փոփոխությունները գտնվում են մշակման փուլում, այդ թվում՝ լավագույն առկա տեխնիկական միջոցների հայեցակարգի ներդրումը: Նախապատրաստական աշխատանքներ են ընթանում ջրային ռեսուրսների պաշտպանության ուղղությամբ՝ ապակենտրոնացված կառավարման միջոցով գետի ավազանի մակարդակով և վնասակար նյութերի ռիսկերը նվազեցնելու համար: Անհրաժեշտ է շարունակ ուշադրություն դարձնել առկա ռազմավարությունների և ծրագրերի իրականացման ու հետագա մոնիտորինգի և կիրարկման ուժեղացման վրա: Հայաստանը կազմել է աղբանոցների, հնացած պեստիցիդների և պոլիքլորինացված բիֆենիլի գույքացուցակները: Վարչական կարողությունների հետագա ամրապնդումը բոլոր մակարդակներով հանդիսանում է կարևոր խնդիր, և պետական մարմինների միջև համակարգումը շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում: Հայաստանում քայլեր են ձեռնարկվել ուղղված քաղաքականության այլ ոլորտներում որոշ բնապահպանական հիմնախնդիրների ինտեգրման խթանման ուղղությամբ, ինչպիսիք են արդյունաբերական քաղաքականությունը:

Շրջակա միջավայրի վերաբերյալ հաշվետվությունների նախապատրաստման հետ կապված որևէ էական զարգացումների չեն արձանագրվել: Հայաստանը, այնուամենայնիվ, շարունակում է իրականացնել մի շարք այլ միջոցառումներ հանրությանը տեղեկություն տրամադրելու կապակցությամբ: Ընթացակարգերը և հանրության հետ քննարկումները շրջակա միջավայրի գնահատման համատեքստում շարունակում է մնալ ուշադրության կենտրոնում: Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին ՀՀ օրենքում փոփոխությունները, որոնք գտնվում են խորհրդարանում քննարկման փուլում, մտահոգություններ են առաջացնում՝ ընթացակարգի պարզեցման արդյունքում հնարավոր բացասական բնապահպանական հետևանքների առումով:

Հայաստանը վավերացրել է անդրսահմանային համատեքստում Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման մասին կոնվենցիային կից շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման արձանագրությունը: Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի մնացած համապատասխան կոնվենցիաներին և արձանագրություններին միանալու կամ

վավերացման հետ որևէ զարգացում չի արձանագրվել: Ավելին, մի շարք համաձայնագրերի իրականացումը, որոնք արդեն վավերացվել են, գտնվում են հատուկ ուշադրության կենտրոնում: Հայաստանը ներգրավված է ԵՄ Ջրային նախաձեռնությունում, որը նախատեսում է ազգային քաղաքականության շուրջ երկխոսություն: Եվրոպական հանձնաժողովի և Հայաստանի միջև տեղի ունեցավ համագործակցության և տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝ ջրային, անտառային տնտեսության, թափոնների կառավարման, շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալների, բնության պահպանության և օդի որակի վերաբերյալ:

2010 թվականին Կովկասում տարածաշրջանային բնապահպանական կենտրոնն իրականացրել է տարածքային միջոցառումներ մի շարք ոլորտներում, ներառյալ տեղեկատվության ոլորտում, հասարակության մասնակցության, բնապահպանական քաղաքականության և տեղական բնապահպանական գործողությունների ծրագրերի հետ կապված: 2010 թվականին տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը նաև բարելավել է իր ներքին կառավարումը, ֆինանսական միջոցների հայթայթումը և տեսանելիությունը: Այնուամենայնիվ, այն հաղթահարել է ֆինանսական անկումը նախորդ տարիների համեմատությամբ, որն արգելակում էր իր գործունեությունը:

**Քաղաքացիական պաշտպանության** ոլորտում, հաստատվել է սեյսմիկ անվտանգության հայեցակարգը և ձգնաժամային կառավարման կենտրոն ստեղծելու նախաձեռնությունը: Իրականացվում են քաղաքացիական պաշտպանության տարբեր ասպեկտների ամրապնդման նախապատրաստական միջոցառումներ, այդ թվում, բարեփոխումների կառավարման և նոր իրավական ակտերի մշակման միջոցառումները: Արևելյան գործընկերության շրջանակներում նույնպես նախատեսված են միջոցառումներ (տես ոլորտային զեկույցը):

2010 թվականին **տեղեկատվական հասարակության** ոլորտում օրենսդրական բարեփոխումների առաջընթացը համեստ էր, թեև Հայաստանի կարգավորող մարմինը (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը) պլանավորում է ներդնել բջջային շարժական կայան, ապահովել կապը ենթակառուցվածքների հետ և պարզեցնել շուկա մուտք գործելու կարգը: Այդ միջոցառումների իրականացումը կլինի առանցքային՝ մրցակցային շուկաներում պայմաններ ստեղծելու համար, որը ներկայումս դեռևս դե ֆակտո հանդիսանում է մենաշնորհի ֆիքսված հեռախոսակապի շուկայում: Ինտերնետից օգտվողների թիվը զգալիորեն աճել է, թեև սպառողները դեռևս ունեն բողոքներ ինտերնետի որակի մասին: Հայաստանում առաջատար բջջային օպերատորը ներդրել է 4G ցանց (LTE տեխնոլոգիայի):

Տեսալսողական ոլորտում, այլ երկրների հեռուստատեսային հաղորդումների ընդունման և վերահաղորդման հետ դեռևս կան դժվարություններ, քանի որ Հայաստանը դեռ չի վավերացրել Եվրոպայի խորհրդի Անդրսահմանային հեռուստատեսության մասին կոնվենցիան:



Հայաստանում **հետազոտությունների ոլորտում** ներդրումները և առկա հնարավորությունները համեմատաբար համեստ են: Հայաստանի 7-րդ շրջանակային ծրագրին մասնակցելու դիմումների քանակը ավելանում է: 2010 թվականին նոյեմբերին տասնութ գիտահետազոտական կազմակերպությունների կողմից ներկայացված դիմումները հավանության արժանացան, ստանալով ֆինանսավորում 880,000 եվրոյի չափով (մասնավորապես ծրագրի այն ոլորտներում, որոնք վերաբերվում են միջազգային համագործակցությանը, հետազոտական ենթակառուցվածքների և տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաներին):

Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում միջազգային գիտություն և տեխնիկայի համագործակցության ցանցում (FP7 IncoNet EECA ծրագիր), որի նպատակն է աջակցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային քաղաքականության շուրջ երկխոսությունը գիտության ու տեխնոլոգիաների ոլորտում և ավելացնելու Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մասնակցությունը 7-րդ շրջանակային ծրագրում:

Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրներում Միջազգային համագործակցության նոր ցանցում (FP7 IncoNet CA / SC) Հայաստանը հանդիսանում է թիրախային երկիր: Հարավային Կովկասի երկրներում Միջազգային համագործակցության ցանցը մեկնարկել է իր աշխատանքները 2010 թվականի ապրիլին և նպատակ ունի ամրապնդելու ու խորացնելու ԵՄ գիտության և տեխնոլոգիաների շուրջ համագործակցությունը Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրներում, ինչպես նաև Մոլդովայի Հանրապետության հետ:

Հայաստանը նաև ակտիվորեն մասնակցում է Սևծովյան ERA-NET ծրագրում, որի նպատակն է համակարգել ԵՄ անդամ պետությունների և գործընկեր պետությունների հետազոտական ծրագրերը ընդլայնվելով դեպի Սևծովյան տարածաշրջան:

## **7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

Բարձրագույն կրթության ոլորտում, կրթության և գիտության նախարարությունը մշակել է պետական և մասնավոր բուհերի ընդունելության նոր կանոններ հիմնված միասնական ավարտական քննությունների արդյունքների վրա՝ արդար և հավասար ընդունելություն ապահովելու նպատակով: Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան, մասնագիտական կրթություն ազգային կենտրոնը հունիսին մշակել է 2010-15թթ. ռազմավարական ծրագիր: Բարձրագույն և այլ մասնագիտական կրթության որակի չափանիշները, որոնք համապատասխանում են եվրոպական չափանիշներին գտնվում են մշակման փուլում: Փետրվարին նախարարությունն ընդունել է նաև հեռակա ուսուցման նոր

քաղաքականություն: Եվրոպական որակավորման շրջանակին համապատասխանող համապարփակ ազգային որակավորման շրջանակի մշակման աշխատանքները դրական ընթացք ունեն: Հուլիսին ընդունված միջնակարգ կրթության մասին նոր օրենքին համապատասխան պետք է ստեղծվեն 91 նոր ավագ դպրոցներ:

Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում բարեփոխումները իրականացվել են Տեմպուս ծրագրի շրջանակներում: Տեմպուս IV ծրագրին մասնակցելու համար ընտրվել էն չորս նախագիծ: Հայաստանը նաև շարունակում է իր ակտիվ մասնակցությունը 2010-11թթ. ուսումնական տարվա Էրասմուս Մունդուս ծրագրին՝ ակնկալելով վեց կրթաթոշակներ Էրասմուս Մունդուս մագիստրոսական դասընթացների Գործողություն 1 շրջանակներում և ուսանողների ու գիտնականների համար նախատեսված 29 դրամաշնորհներ Գործողություն 2 շրջանակներում: Առաջին անգամ 2010 թվականին Երևանի պետական համալսարանին շնորհվել է Ժան Մոնե միջառարկայական մոդուլը, որը կենտրոնացած է ԵՄ Կովկաս հարաբերությունների վրա:

**Մասնագիտական կրթության և վերապատրաստման** ոլորտում, Եվրամիության աջակցությամբ Հայաստանում իրականացվեցին բարեփոխումներ ուսուցիչների վերապատրաստման, մասնագիտական քոլեջների կապիտալ վերանորոգման ու արդիականացման ուղղությամբ: Կրթության և գիտության նախարարությունը ընդունել է ավելի քան 80 մասնագիտությունների միջին մասնագիտական կրթական ծրագրերի պետական ստանդարտներ, իսկ հետագայում ընդլայնելու է մոդուլային ուսուցման մոտեցումը: Բացի այդ, 2010 թվականի հոկտեմբերին նախարարության կազմում ստեղծել է ուսումնառության բաժինը:

**Մշակույթի** ոլորտում, մշակույթի ծրագիրը շրջանակներում Հայաստանը մասնակցել է չորս նախագծերի՝ 2010 թվականի ԵՀՔ երկրների համար նախատեսված հատուկ նախաձեռնության ներքո: Հունվարին ՀՀ մշակույթի նախարարությունը հաստատել է 2011 թվականի ոչ նյութական մշակույթի պահպանության և օգտագործման ծրագիրը՝ փաստաթղթերի և սերտիֆիկացման ընթացակարգի հետ միասին: Տարածաշրջանային համագործակցությունը զարգացնելու նպատակով Արևելյան գործընկերության շրջանակներում և Կիևի նախաձեռնություն ծրագրով, Հայաստանը պատրաստվում է վավերացնել 2005 թվականի Հասարակության համար մշակույթային ժառանգության արժեքի մասին ԵՄ շրջանակային կոնվենցիան:

Հայ **երիտասարդները** և երիտասարդական կազմակերպությունների շարունակել են օգտվել Երիտասարդական գործողությունների ծրագրի կողմից առաջարկվող հնարավորություններից, մասնակցելով ոչ ֆորմալ կրթության բնագավառում փոխանակումներին, կամավոր ծառայության և երիտասարդական համագործակցության միջոցառումներին:

Հայաստանը շարունակել է **առողջապահության** ոլորտի բարեփոխումները, մասնավորապես առողջության առաջնային պահպանման և առողջության

ապահովագրման ուղղությամբ: 2010 թվականի նոյեմբերին ուժի մեջ են մտել բժշկական օգնություն և բժշկական ծառայությունների մասին օրենքում փոփոխությունները՝ ուղղված անվճար բժշկական ծառայությունների ցանկի ընդլայնմանը: Առողջապահության մասին օրենքի նախագիծը գտնվում է մշակման փուլում: ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել, աշխատակիցների առողջության պահպանման ծառայությունների բարելավման որակի հայեցակարգը: 2010 թվականի մարտին նախորդ տարվա Ա գրիպի (H1N1) համաճարակի արդյունքում, Եվրոպական հանձնաժողովը և Հայաստանը հաստատեցին հաղորդակցության ուղիներ՝ միջազգային նշանակության հասարակական առողջության ճգնաժամային պայմաններում համաճարակաբանական տեղեկատվության փոխանակման համար 2010 թվականի ապրիլին Հայաստանն ընդունել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ և տուբերկուլյոզի 2010-2014թթ. ռազմավարական ծրագիրը:

**8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՆՔՄԱՅԻՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՒ ԹՎԵՐԸ**

***Համագործակցության շրջանակը***

Փաստաթղթի միջնաժամկետ վերանայման արդյունքում հաստատել է, որ 2007 թվականին ընդունված պետության ռազմավարական փաստաթուղթը իրավագոր է Հայաստանի հետ համագործակցության համար: 2010 թվականին 2011-13 թթ. Հայաստանի նոր ազգային ինդիկատիվ ծրագիրը ընդունվել էր ու դրա բյուջեն կազմում է 157.3 մլն. եվրո: Ծրագիրն ուղղված է աջակցելու հիմնական քաղաքականության նպատակների իրագործմանը, ինչպես նշված է ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրում և հետապնդում է երեք գերակա խնդիրներ՝ (1) աջակցություն ժողովրդավարական կառույցներին և լավ պետական կառավարում, (2) առևտրային և ներդրումային, կարգավորման հավասարեցում և բարեփոխումներ, և (3) սոցիալ-տնտեսական բարեփոխումներ և կայուն զարգացում:

2011-13թթ. ազգային ինդիկատիվ ծրագիրը նախատեսում է որոշակի գումարի հատկացում՝ Արևելյան գործընկերության հետ կապված նոր գործողությունները ֆինանսավորելու համար, հատկապես պետական մարմինների զարգացման համապարփակ ծրագիրը (նվազագույնը 32,8 մլն եվրո) և համախմբվածության քաղաքականությունը (Cohesion Policy)(նվազագույնը 7.1 միլիոն եվրո): Պետական մարմինների զարգացման համապարփակ ծրագրի շրջանակային փաստաթուղթը ստորագրվել է 2010 թվականի նոյեմբերին և սահմանում է աջակցության հետևյալ հիմնական ոլորտները. Արևելյան գործընկերության բանակցությունների շուրջ ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդումը, արդարության, ազատության և անվտանգության, հակակոռուպցիոն, ու Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի մաս հանդիսացող Արևելյան գործընկերության բանակցություններին նախապատրաստումը: Շրջանակային փաստաթղթում

սահմանված առանցքային հաստատությունները պետք է մշակեն ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագիր, որի իրականացմանը պետք է օժանդակել 2011-2013թթ. տարեկան գործողությունների ծրագրի շրջանակներում կիրառելով մի շարք գործիքներ, ներառյալ՝ տեխնիկական աջակցություն, ԹՎԻՆԻՆԳ, Թայեքս, Սիգմա և վերապատրաստման դասընթացների միջոցով: Տարածաշրջանային քաղաքականության երկխոսության առումով հունվարին տարածքային կառավարման նախարարությունը և Թայեքսը կազմակերպել են սեմինար՝ տարածաշրջանային և ազգային պաշտոնատար անձանց համար: Դեկտեմբերին Հայաստանը առաջարկել է 2011 թվականի ընթացքում ստեղծել տարածաշրջանային քաղաքականության հետ երկխոսության հանձնաժողով:

### *Իրականացում*

2007-2010թթ. ազգային ինդիկատիվ ծրագիրում ներառված միջոցառումները գտնվում են իրականացման փուլում: Միջոցառումները ներառում են մասնագիտական կրթության և ուսուցման ծրագիրը (2007թ. գործողությունների տարեկան ծրագրի, 16 միլիոն եվրո), որն ավարտվել է 2010 թվականի հուլիսին: Արդյունքում, վերակազմավորվել է Կրթության և գիտության նախարարության աշխատակազմի մասնագիտական կրթության և ուսուցման վարչությունը. ամրապնդվել են վարչության կողմից մոնիտորինգ իրականացնելու իրավասությունները: Ավելին, ընտրվել և վերազինվել են 12 մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններ, որոնք կդառնան բազմաֆունկցիոնալ տարածաշրջանային կենտրոններ: Ստեղծվել և ամբողջությամբ գործում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման Ազգային կենտրոնը:

Բացի այդ, շարունակվում է «Արդարություն բարեփոխումների ծրագրի» (18 մլն. եվրո) իրականացումը: Այս ծրագրի շրջանակներում Հայաստանը նախաձեռնել է արդարության ոլորտում բարեփոխումների իրականացման համապարփակ ռազմավարության և պատշաճ հանրային ֆինանսական կառավարման համակարգի մշակումը և օրենքի կիրառման համակարգի բարելավումը: Բացի այդ, անհրաժեշտ է զգալիորեն նվազեցնել դատական համակարգում առկա կոռուպցիան: Այլ նպատակները ներառում են արդարադատության մատչելիության բարելավումը հանգեցնելով արդարության իրավունքի ավելի լայն կիրառմանը և դատական համակարգի անկախության ավելացմանը, նպաստելով դատական վարույթների նկատմամբ վստահության ամրապնդմանը: Հայաստանը նաև գործադրել է ջանքեր ԵՄ անդամ երկրների դատական և իրավապահ մարմինների հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ:

Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում հետագա աջակցության անհրաժեշտության արդյունքում (2009թ. գործադրությունների տարեկան ծրագրի), որոշվեցին աջակցության հետագա ոլորտները: Մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառի բարեփոխումները (15 մլն եվրո) ամրապնդելու նպատակով, ուշադրություն կենտրոնում ունենալով մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառի մշակումը և մատուցումը, ստեղծվել է տեխնիկական

աջակցության կառույց (Մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացման ազգային կենտրոն), դրանով իսկ ավելացնելով պետության ներդրումը բարեփոխումների գործընթացում: Իրականացումը կսկսվի 2011 թվականին:

2010 թվականին Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում երկկողմ ֆինանսավորմամբ Հայաստանին տրամադրված ընդհանուր գումարը կազմել է 27.7 միլիոն եվրո: 2010 թվականի գործադրությունների տարեկան ծրագրի շրջանակներում տրամադրվել է 21 միլիոն եվրո (որը բաշխվել է ոլորտների միջև)՝ օժանդակելու կառավարությանը իրականացնելու ԵՄ-Հայաստան գործողությունները ծրագրով նախատեսված մի շարք առանցքային միջոցառումներ և նախապատրաստվելու Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում Արևելյալ գործընկերության շուրջ բանակցություններին:

Զգալի միջոցներ են տրամադրվել Թվինինգ ծրագրերի ֆինանսավորման համար (2007թ. եվրո 5 մլն, եվրո 2008 թ. 6 մլն եվրո, 2009 թ. 5.5 մլն եվրո, 2010 թ. 5.5 մլն եվրո): 2010 թվականի վերջում իրականացվում էրն չորս Թվինինգ ծրագրեր, ևս 7 ծրագիր գտնվում են մշակման փուլում:

Բացի երկկողմ ֆինանսավորման, Հայաստանը մասնակցել նաև Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում ֆինանսավորվող միջառնամանային, միջտարածաշրջանային և տարածաշրջանային ծրագրերի հետ կապված համագործակցության միջոցառումներին: Հայաստանը մասնակցել է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի Սևծովյան ավազանի միջառնամանային համագործակցության ծրագրում (21,3 մլն. եվրո 2007-13թթ ընթացքում իրականացվող ամբողջ ծրագրի համար): Այս ծրագրի առաջնահերթ խնդիրներն են՝ աջակցել միջառնամանային տնտեսական և սոցիալական համագործակցության զարգացմանը՝ ընդհանուր ռեսուրսների հիման վրա, շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության հետ կապված ռեսուրսների և իրավասություններ բաշխումը, մշակութային և կրթական նախաձեռնություններին աջակցությունը՝ Սևծովյան ավազանում միասնական մշակութային միջավայր ստեղծելու նպատակով:

Եվրոպական հարևանության քաղաքականության Ներդրումային գործիքի շրջանակներում, Հայաստանի երկու նախագծեր 2010 թվականին արժանացել են նախնական հավանության: Այդ նախագծերն են՝ Երևանի Մետրոպոլիտենի վերանորոգման նախագիծը (Փուլ II) և Կոտայքի պինդ թափոնների կառավարման նախագիծը:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի օգնության փաթեթը լրացնում ԵՄ այլ գործիքները: Հայաստանն օգնություն է ստացել հորիզոնական գործիքների շրջանակներում ֆինանսավորվող համագործակցության միջոցառումներից. Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը և Զարգացման համագործակցության գործիքի թեմատիկ ծրագրերը՝ ոչ

պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման ծրագրերը և պարենային ապահովության ծրագիրը:

2010 թվականին Եվրամիության խորհրդատվական խումբը շարունակել է տրամադրել աջակցություն ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրում ներառված հիմնական ոլորտներին: Զգալի ներդրումներ են կատարվել մաքսային, մարդու իրավունքների պաշտպանության, հակակոռուպցիայի ու կառավարման, և առևտրի, մասնավորապես առևտրում առկա տեխնիկական խոչընդոտների ոլորտներում բարեփոխումների իրականացման ուղղությամբ: ԵՄ շարունակում է ֆինանսավորել Հայաստանում Եվրամիության խորհրդատվական խմբի գործունեությունները (4.2 միլիոն եվրո) 2009 թվականի գործողությունների տարեկան ծրագրի շրջանակներում: Եվրամիության խորհրդատվական խումբը կտրամադրի նպատակաուղղված խորհրդատվության Արևելյան գործընկերությունը վերաբերվել ոլորտներում և իր ուշադրության կենտրոնում պահելով ժողովրդավարության և մարդու իրավունքների, արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտները, ինչպես նաև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր հետ կապված նախապատրաստական աշխատանքները:

Միջուկային անվտանգության բնագավառում տրամադրվող աջակցության հետ կապված, միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության ծրագրի (2009 թ. ֆինանսավորում) ներքո իրականացվում են ծրագրեր, որոնց շրջանակներում Մեծամորի ատոմակայանը ստանում է օժանդակության անմիջապես ԱԷԿ-ի շահագործման վայրում, ինչպես նաև, սարքավորումներ՝ 11 միլիոն եվրո արժողությամբ: Միջուկային անվտանգության բնագավառում համագործակցության ծրագրի 2008, 2009 և 2010 թվականների Գործողությունների Ծրագրերի շրջանակներում իրականացվել են միջուկային անվտանգության բարձագմանն այլ ծրագրեր 13.6 միլիոն եվրո արժողությամբ, որոնք ուղղված են ՀԱԷԿ-ի անվտանգության կուլտուրայի ուժեղացմանը:

2010 թվականի նոյեմբերին Հայաստանի հետ համաձայնեցվել են ԵՄ մակրոֆինանսական օգնությունը կարգավորող պայմանները (65 միլիոն եվրո վարկ և 35 մլն եվրո դրամաշնորհ): Մակրոֆինանսական օգնության նպատակն է մեղմել գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքները: Մակրոֆինանսական օգնության առաջին հատկացումը պետք է կատարվի 2011 թվականի երկրորդ եռամսյակում:

2010 թվականին Եվրոպական ներդրումային բանկը ստորագրել է իր առաջին վարկավորման գործարքը ՀՀ կառավարության հետ: Բանկի կողմից տրամադրված ֆինանսավորումը (5 մլն. եվրո) կօգտագործվի Երևան քաղաքի մետրոպոլիտենի արդիականացման վրա, դրանով իսկ օգնելով բարելավելու Հայաստանի մայրաքաղաքի քաղաքային միջավայրը:

### ***Ղոնորների համակարգումը***

2010 թվականին իրականացվել են համակարգման աշխատանքներ չորս հիմնական ղոնորների հետ (Համաշխարհային բանկ, արժույթի միջազգային հիմնադրամ ԱՄՆ ՄԶԳ և ԵՀ), որոնց մասնակցել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարը: Հայաստանը պատասխանատվություն է ստանձնել համակարգելու ղոնորների հետ աշխատանքները: